

# Սումկայիթ. Խուլիկանութի՛ւն Թէ Ցեղասպանութիւն

Գրեց ՏՈՒԹ. ՌՈՒԲԷՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Բոլորս ալ կը յիշենք թէ ինչպէս Վարդգէս Պետրոսեան, Գերագոյն Սովետի նիստերէն մէկուն մէջ ուր կը բնուէր Ղարաբաղեան հարցը, «Ցեղասպանութիւն» անուանեց Սումկայիթի դէպքերը եւ թէ ինչպէս Կորապետ ընդունեցեալ եւ զգուշութեան հրահրեց Պետրոսեանը «որ պէտքի աւելի ուր չզղջայ իր գործածած բռնություն համար»:

Այդ թուականէն ի վեր վերնագրի հարցումին շուրջ թեր եւ դէմ կարծիքներ գտանք հայրենական մամուլին մէջ, իսկ սովետական մամուլը գիտակցութեամբ ընդհանրապէս խուսափեցաւ ցեղասպանութիւն բռն իսկ գործածելէ, նոյնիսկ հերքելու համար նման որակաւորում:

Այս յօդուածով մենք պիտի փորձենք լուսարանել այս հարցը՝ հիմնուելով 1948ին հռչակուած «Ցեղասպանութեան կանխարգիւման եւ պատիժը» վերաբերեալ պայմանագիրին որը վաւերացուեցաւ Սովետական Միութեան կողմէ աւելի կանուխ քան Միացեալ Նահանգները՝ որուն վաւերացումը կատարուեցաւ 40 տարի ետք՝ 1988ին միայն:

Մեր ձեռքը հասած հայրենական մամուլին մէջ, հանդիպած ենք միայն մէկ փորձի՝ ուր Սումկայիթի դէպքերը բնուած են այս անկիւնէն:

Այդ կարգի երկու յօդուած կը գտնենք «Սովետական Հայաստան» օրաթերթի 12-6-1988ի թիւին մէջ, մին՝ ստորագրուած Մ. Գրիգորեանի կողմէ, միւսը՝ Երեւանի պետական լրատուարանի իրաւաբանական ֆակուլտետի խորհուրդի կողմէ:

Առաջինին մէջ կը գտնենք հետեւեալ հաստատումը: «Ցեղասպանութեան համար պատասխանատուութիւն է նախատեսուած 1948ի միջազգային պայմանագրութեամբ, որը ստորագրել է Ս.Ս.Հ.Մ.ը: Բայց սովետական ներպետական քրէական օրէնսդրութեան մէջ բացակայում է ցեղասպանութեան համար պատասխանատուութիւն սահմանող յատուկ իրաւանորմ»:

Երկրորդ գրութեան մէջ՝ հարցը դարձեալ կը բնուի միմիայն սովետական ներքին օրէնսդրութեան լոյսին տակ եւ հեղինակները կը յանգին այն եզրակացութեան թէ Սումկայիթի վայրագութիւնները պէտք է որակաւորուին որպէս «բանթիթիթ» եւ մասսայական անկարգութիւն»: Ցեղասպանութիւն չկայ:

Որպէսզի ընթերցողը կարողանայ ինքն իսկ դատել եւ դիրքորոշուիլ, տանք վերը յիշուած համաձայնագրի այն յօդուածը որ կը բնութագրէ ցեղասպանութեան ոճիրը:

Յօդ. 2: Սոյն համաձայնագրով, ցեղասպանութիւն կը նկատուի վարը յիշուած արարքներէն ունէ միմ որուն գործադրութեան նպատակն է ոչնչացնել բոլորովին կամ մասնակիօրէն, ազգային, տոհմային, ցեղային կամ կրօնական խումբ մը:

ա. - Խուճի անդամներու սպանութիւնը...  
բ. - ... եւայլն...  
գ. - ... եւայլն...  
Կասկածէ վեր է, թէ հայերը կը կազմենք «ազգային» կամ «տոհմային» խումբ մը, հաւաքականութիւն մը: Ուստի ունէ փորձ կամ արարք,

որ կը միտէ սպանել «հայեր» միայն որովհետեւ հայեր են եւ ոչ թէ ուրիշ պատճառի մը համար, ապա այդ արարքը կը նկատուի ցեղասպանութիւն: Կասկածէ վեր է նաեւ, թէ Սումկայիթի ոճրագործութիւնները ուղղուած էին «Հայերու» դէմ, որպէս հայեր եւ միմիայն որովհետեւ հայեր էին:

Այս հաստատ իրականութիւններէն մեկնելով անվերապահ կերպով կըրնանք պնդել թէ Սումկայիթեան ոճրագործութիւնները՝ ցեղասպանութիւն պէտք է որակել եւ ոչ թէ խուլիկանութիւն կան պանթիթիթի կամ ուրիշ ունէ բան:

Վերը յիշուած Մ. Գրիգորեանի յօդուածը կարգալով՝ կարելի է եզրակացնել, թէ յօդուածագիրը համաձայն է այս որակաւորումին, սակայն նկատի ունենալով, թէ նման ոճրագործութիւն չէ նախատեսուած սովետական ներքին քրէական օրէնսդրութեան մէջ, ուստի կարելի էր այդ ոճիրները ցեղասպանութիւն որակել եւ բաւականացած էին գործադրելով ցոյցութիւն ունեցող օրէնքներու տրամադրութիւնները:

Այս առնչութեամբ կարելի է ըսել, թէ ճիշդ է Մ. Գրիգորեանի պնդումը, թէ ցեղասպանութիւն կոչուած ոճիր չէ նախատեսուած սովետական հանրապետութիւններու ներքին քրէական օրէնսդրութեան մէջ:

Սակայն այս կէտին քով կանգ առնելու չէ: Հարց դնելու է, թէ ինչի՞ կը ծառայեն միջազգային համաձայնագրերը, եթէ անոնք, վաւերացումէն ետքն իսկ, պիտի չիկիրարկուին ստորագրեալ պետութիւններու կողմէ:

Միացեալ Նահանգները 40 տարի ետք միայն վաւերացուցին յիշեալ դաշնագիրը եւ եթէ յիշենք թէ տակաւին կան պետութիւններ, որոնք կը վարանին զայն վաւերացնելու մէջ՝ ապա շեշտը դրած կ'ըլլանք հարցի մը վրայ, որ մեծագոյն խոչընդոտն է որուն կը հանդիպին համամարդկային բարոյականութիւնը եւ օրինապահութիւնը տարածել փորձող միջազգային իրաւունքի հիմնական սկզբունքները:

Ուրիշ խօսքով՝ պետութիւնները կը խուսափին յանձն առնել որոշ պարտաւորութիւններ, որոնք կրնան դուռ բանալ իրենց ներքին գերիշխանութեան վրայ հակազիտ մը ստեղծելու հաւանականութեան:

Սումկայիթի առիթով լսեցինք նոյնիսկ մեկնաբանութիւններ ըստ որոնց զոհերու թիւը հետեւողականօրէն 34էն պակաս ներկայացուցաւ խուսափելու համար ինչ որ միջազգային միջամտութենէ, քանի որ, ըստ այդ գրոյցներուն, միջազգային հաւաքականութիւնը իրաւունք կը ստանայ միջամտելու՝ երբ սպանութիւններու թիւը անցնի 34ը: Նման տրամադրութիւն գոյութիւն չունի եւ ցեղասպանութիւնը կը մնայ ցեղասպանութիւն՝ զոհերու թիւը ըլլայ 5 կամ 5000:

Այն որմէ կը խուսափին պետութիւնները՝ իրենց հողին վրայ միջազգային միջամտութիւններն են: Արդարեւ այն բոլոր աշխատանքները որ տարուեցան հիմնելու համար միջազգային դատարան մը՝

դատելու համար ցեղասպանութեամբ ամբաստանուած պետութիւններն ու անհատները, ձախողութեան մատնուեցան, հակառակ որ ցեղասպանութեան վերաբերեալ համաձայնագիրը կը տրամադրէ իր ճիշդ յօդուածին մէջ:

«Ստորագրեալ կողմերը յանձն կ'առնեն, իրենց սահմանադրութիւններուն տրամադրութիւններուն համաձայն անհրաժեշտ օրէնսդրական կարգադրութիւններ ընել ապահովելու համար ներկայ համաձայնագրի տրամադրութիւններու գործադրութիւնը եւ մանաւանդ նախատեսել այն քրէական պատիժները, որոնց պիտի ենթարկուին ցեղասպանութեան մէջ յանցաւոր անձերը...»:

Ճիշդ յօդուածը կը շարունակէ. -

«Ցեղասպանութեամբ ամբաստանուած անձինք պիտի ներկայացուին այն պետութեան իրաւասու դատարաններուն առջեւ որուն տարածքին վրայ գործադրուած է արարքը կամ միջազգային քրէական Ատեանին առջեւ որ իրաւասու կը դառնայ հանդէպ այն ստորագրեալ կողմերուն որոնք ընդունած կ'ըլլան անոր լիազօրութիւնը»:

Վերոյիշեալ երկու յօդուածներու արձակած թելադրութիւններէն ոչ մէկը արժանացած է մինչեւ այսօր պետութիւններու դրական ուշադրութեան:

- չկան ներքին օրէնքներ որ պատմեն ցեղասպանութեան ոճիրը:

- չէ կազմուած միջազգային քրէական Ատեան:

- եւ եթէ նոյնիսկ կազմուէր՝ ան իրաւասու կը դառնայ միայն այն պարագային երբ ստորագրեալ կողմերը հաճին ընդունիլ անոր լիազօրութիւնը:

Ուստի, շատ հեռու կը գտնուինք այն միտքէն ուր կարելի ըլլար ըսել, թէ այն սովետական դատարանները, որոնք քննարկեցին Սումկայիթի ոճրագործութիւնները ամբողջովին սխալեցան սովետական օրէնքներու մեկնաբանութեան եւ կիրառման մէջ:

Բայց ինչ որ կրնանք անվերապահօրէն ըսել, հետեւեալն է.

Այն ժամէն ի վեր երբ Սովետական Միութիւնը վաւերացուց ցեղասպանութեան վերաբերեալ միջազգային համաձայնագիրը, այն ժամէն սկսեալ ան ճանչցաւ ցեղասպանութիւն կոչուած ոճիրը, իր բոլոր մանրամասնութիւններով, ի մէջ առեալ այդ ոճիրին համապատասխան պատիժը սահմանելու եւ տնօրինելու պարտաւորութիւնը:

Այս կէտին մէջ է որ կը կարծենք թէ Մ. Գրիգորեանը պարտաւոր էր ընդգծել թէ՛ հակառակ անոր

որ սովետական ներքին օրէնսդրութիւնը, յակասէ անուանէ չէ սահմանած, ցեղասպանութեան համար պատասխանատուութեան սահմանող յատուկ իրաւանորմը...: Սակայն սովետական օրէնսդրութիւնը միջազգային համաձայնագրի վաւերացումէն վերջ, իւրացուցած էր (իրն) ըրած այդ դաշնագրի տրամադրութիւնները:

Արդարեւ ընդունուած կանոն է միջազգային իրաւունքի մէջ, թէ ունէ պետութեան վաւերացուցած համաձայնագիրը կամ դաշինքը մաս կը կազմէ այդ պետութեան օրէնսդրութեան, ուստի եւ անոր տրամադրութիւնները պէտք է նկատուին ներքին օրէնքի համագործ:

Արդարեւ կը կարգանք, Փոլ Ֆօշիյի, Թրէթ Տը Տրուա Էնթերնալիստի, Փարիզ 1988, էջ 50, հետեւեալը՝ «Ներքին օրինական տրամադրութեան մը եւ միջազգային իրաւունքի տրամադրութեան մը միջեւ ծագած հակասութեան մը պարագային, այս վերջինն է որ կը գերիշխէ. այս վերջինին իրաւական ոյժը առաջինինէն գերակշիռ է»: Կը հետեւին քանի մը օրինակներ, ուր պատահած է որ որոշ պետութիւններ չեղեալ նկատած են իրենց ստորագրած միջազգային համաձայնագրերուն հակասող ներքին օրինական տրամադրութիւնները: Իսկ Միացեալ Նահանգները, իրենց սահմանադրութեամբ եւ Գերագոյն ատեանի որոշումներով, կը նկատեն թէ միջազգային իրաւունքը մաս կը կազմէ ազգային օրէնսդրութեան: Նոյն ըմբռնումը կը տիրէ Անգլիայի մէջ եւ Հարաւ ամերիկեան բազմաթիւ երկիրներու մէջ:

Ինչ է Սովետական Միութեան

Այս հարցադրումը արդէն ի յայտ կը բերէ միջազգային իրաւունքի թերի կողմը: Եթէ օրէնքը համապարփակ է եւ համատարած, ինչպէս ուրեմն բացատրել միջազգային օրէնքին թոյլտուութիւնը որ որոշ երկիրներ եւ պետութիւններ ընդունին կամ չ'ընդունին որոշ օրինական տրամադրութիւններու գործադրութիւնը իրենց սահմաններէն ներս: Հոս ալ դարձեալ կը գտնուինք պետութիւններու նախանձախնդրութեան առջեւ՝ թոյլ չտալ որ իր գերիշխանութիւնը ոտնակոխ ըլլայ, թոյլ չտալ որ ինքն իրեն վերապահած իրաւունքներուն մէջ միջամուխ ըլլան արտաքին ոյժերը, միջազգային մարմինները, միջազգային հաւաքականութիւնը:

Սովետական Միութիւնը ունի օրէնք մը, որդեգրուած 6 Յուլիս 1978, որ կը վերաբերի «միջազգային իրաւունքի» (Շար.ը տեսնել 14րդ էջ)

**BAIKAR ARMENIAN WEEKLY**  
ISSN 0741-8396  
An A.D.L. Publication  
**ՊԱՅՔԱՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան  
Ամերիկայի Արեւելեան Շրջանակի  
Published weekly except two weeks in July by:  
**Baikar Association, Inc.**  
468 Mount Auburn Street, P.O.Box 302, Watertown, MA 02172  
Telephone: (617) 924-4420  
Telex (TLXI): 928436 (BAIKAR/MIRROR) • FAX (617) 924-3860  
Editor: **KRIKOR KEUSSEYAN**  
Subscription Rate: \$50 per year  
Advertising: \$5.00 per column inch  
Second Class Postage paid at Boston, MA  
**POSTMASTER:** Send address changes to **Baikar Armenian Weekly**,  
P.O.Box 302, Watertown, MA 02172

## ՍՈՒՄԿԱՅԻԹ

դային համաձայնագրերու կնքման, գործադրութեան եւ դադարման»:

19րդ յօդուածը կը տրամադրէ: «Սովետական Միութեան կողմէ ստորագրուած դաշինքները մանրակրկիտ կերպով կը յարգուին, ըստ միջազգային իրաւունքին»:

Իսկ սահմանադրութեան 20րդ յօդուածը կը յիշէ թէ՛ «Սովետական Միութեան յարաբերութիւնները միւս պետութիւններուն հետ հիմնուած են միջազգային իրաւունքի կողմէ ընդունուած սկզբունքներու եւ իրաւանորմերու եւ Սովետական Միութեան կողմէ կրնուած միջազգային համաձայնագրերու բարեխիղճ գործադրութեան վրայ»:

Հարկ չենք տեսներ յիշել այն գործնական միջոցները որոնք նախատեսուած են ապահովելու համար միջազգային դաշինքներու «բարեխիղճ գործադրութիւնը», այլ կը բաւէ ըսել, թէ նման գործնական միջոց կը կայանար հրապարակել համապատասխան օրինական միջոցառում մը յորդորելով սովետական դատարաններուն որ մտցնեն ցեղասպանութիւնն ալ իրենց ոճիրներուն ցանկին մէջ՝ իրեն համապատասխան պատիժներով:

Բայց որ պետութիւնն է որ կ'ընդունի թէ իր հողերուն վրայ գործադրուած է ցեղասպանութիւն: Այս ոճիրը կը գործադրուի միշտ ուրիշին կողմէ եւ իւրաքանչիւր պետութիւն ինքզինքին իրաւունք կուտայ ամբաստանել ուրիշները, բայց երբեք չի կրնար ընդունիլ, թէ ինքը նման ոճիր մը գործադրած կրնայ

ըլլալ: Մեզի ամենամօտ փաստը Թուրքիան է որ չի դադրիր Պուլկարիան ամբաստանելէ, ուրանալով իր գործած ցեղասպանութիւնները:

Ինչ որ կը վերաբերի Սովետական Միութեան եւ Սումկայիթի պարագային, հաւանաբար անհրաժեշտ ըլլայ ընել հետեւեալ լուսաբանութիւնը:

Ցեղասպանութեան վերաբերեալ 1948ի դաշնագիրը անպայմանօրէն պետութիւններու վրայ չէ որ կը նետէ ոճիրին պատասխանատուութիւնը: Պատասխանատու կրնան ըլլալ, ինչպէս թուած է այդ դաշնագրի 4րդ յօդուածը, «այն անձերը որոնք ցեղասպանութիւն գործադրած են, ըլլան անոնք ղեկավարներ, պաշտօնեաներ կամ անհատներ»:

Սումկայիթի պարագային բնորոշ է թէ Սովետական կեդրոնական կառավարութիւնը չէ ամբաստանուած

ցեղասպանութեամբ: Ինչ որ կը վերաբերի Ատրայէյճանի կառավարութեան՝ մինչեւ հիմա յայտնի փաստերը անոր մեղսակցութիւնը չեն արժարժեր: Ուրեմն յանցաւորները, հիմակուհիմա, անհատներ են, ղեկավար կամ պարզ անհատներ: Եւ զանոնք դատել ու պատժել ցեղասպանութեան ոճիրով՝ ոչինչով կրնայ մրտել Սովետական Միութեան վարկը: Ընդհակառակը նախընթաց մը կրնայ ստեղծել նախ հաստատելով թէ Սովետական Միութիւնը իսկապէս «բարեխիղճօրէն» կը գործադրէ իր ստորագրած դաշնագրերը, եւ միեւնոյն ատեն ազդարարութիւն մը՝ նման ոճիր մը հետագային գործադրելու մասին մտածողին հանդէպ:

Վերադառնալով այն կէտին թէ ցեղասպանութեան կանխարգելման

# ՍՈՒՄԿԱՅԻԹ

(Ծար. 2րդ էջին)

դաշնագիրը կը նկատուի՞ արդեօք Սովետական Միութեան ներքին օրէնսդրութեան մաս մը թէ ոչ, այս առնչութեամբ, Երեւանի համալսարանի համար պատրաստուած «Միջազգային իրաւունք» գրքին մէջ, 1983, Երեւան, կը կարդանք Ա. Ա. Եսայեանի հետեւեալ խորհրդածութիւնները, էջ 105:

«Միջազգային իրաւունքի ներգործութիւնը ազգային օրէնսդրութեան վրայ կարող է արտայայտուել բազմաթիւ ձեւերով...»:

«Սովետական իրաւունքի մի շարք ճիւղերի հիմունքներում եւ դրանց հիման վրայ ընդունուած օրէնսգրքերում, սահմանուած է, որ այն բոլոր դէպքերում, երբ ՍՍՀՄ Միջազգային պայմանագրերում նախատեսուած կանոնները չեն համընկնում սովետական օրէնքում տեղ գտած կանոններէն, ապա պէտք է կատարուեն միջազգային պայմանագրի կանոնները...»:

Եւ կը շարունակէ մէջբերելով Հայաստանի քաղաքացիական օրէնսգրքի 572րդ յօդուածը.

«Ս.Ս.Հ. Միութեան եւ միութենական հանրապետութիւնների քաղաքացիական օրէնսդրութեան հիմունքները 129րդ յօդուածին համապատասխան, այն դէպքում, երբ միջազգային պայմաններով կամ միջազգային համաձայնագրով, որին մասնակցում է Ս.Ս.Հ. Միութիւնը, սահմանուած են այլ կանոններ, քան սովետական քաղաքացիական օրէնսդրութեան մէջ պարունակուող կանոնները, ապա կիրառուում են միջազգային պայմանագրի կամ միջազգային համաձայնագրի կա-

նոնները»:

Կը թուի թէ յիշեալ յօդուածը, որ միջազգային եւ ներքին օրէնքներու հակասութեան պարագային նախընտրութիւնը եւ գերակայութիւնը կուտայ միջազգային օրէնքին, բաւական պէտք է ըլլար Յեղասպանութեամբ դատապարտելու համար սովետական ոճրագործները եթէ սահմանափակուած չըլլար «քաղաքացիական մարզին մէջ եւ ընդգրկէր նաեւ «քրէականը»:

Այնպէս կը թուի թէ սովետական օրէնսդրութեան քրէական ճիւղը դուրս մնացած է այս ընդհանուր սկզբունքի գործնական կիրառումէն: Սակայն նման թերացում մը չի կրնար արդարանալ, քանի որ Սովետական Միութիւնը ստորագրած է նաեւ 1969ին Վիեննայի մէջ կատարուած «միջազգային պայմանագրերու» վերաբերեալ դաշինքը, որ կը տրամադրէ իր 27րդ յօդուածով.

«Մասնակիցը չի կրնար վկայակոչել իր ներքին իրաւունքի դրոյթը՝ որպէս արդարացում իր կողմէ պայմանագիրը չկատարելու համար»:

Միեւնոյն առնչութեամբ հետաքրքրական է յիշեցնել թէ սովետական իրաւաբանները որքան հետեւողական եղած են՝ երբ հարցը կը դառնար նիւրէնպէրկեան դատավարութեան կազմակերպումին եւ Ֆաշիստներու դատապարտման շուրջ:

Կը կարդանք, օրինակ, իրաւաբանական գիտութիւններու Տօքթ. Վլատիմիր Պուստոգայովի ստորագրութեամբ յօդուածի մը մէջ, թէ ինչպէս «Սովետական իրաւաբանները ծանրակշիռ աւանդ են ներդրել այն սկզբունքների մշակման գործում, որոնք այնուհետեւ հիմք են դարձել միջազգային գինուորական

տրիպունալի կանոնադրութեան համար»:

Յօդուածագիրը կը շարունակէ, թուելով մասնաւորաբար Ս. Միութեան Գիտութիւններու Ակադեմիայի թղթակից անդամ, Փրոֆ. Ա.Ն. Տրայնինի մասնակցութիւնը այդ աշխատանքներուն, նշելով թէ ինչպէս Ս. Միութիւնը հանդէս է եկած յայտարարութեամբ մը, Հոկտեմբեր 1942ին, որը կը վերջանար պահանջելով որ Ֆաշիստական Գերմանիայի պարագլուխներին յանձնել միջազգային տրիպունալ դատին եւ անոնց պատժել քրէական օրէնքի ամենայն խստութեամբ:

Ինչպէս որ գիտենք՝ այն լայն ըմբռնումը, որ կը կոչուի «Մարդկութեան դէմ ոճիր», կ'ընդգրկէ պատերազմական ոճիրները, Ֆաշիստական Գերմանիոյ ղեկավարներու ոճիրները եւ նոյնպէս ցեղասպա-

նութիւնը:

Կը կարծեմ թէ, եթէ սովետական իրաւագէտները խղճմտօրէն եւ միայն գիտական մօտեցումով մը քննէին «Սովետական խուլիկանութիւնները» հոն անպայման պիտի գտնէին պատճառներ՝ ըլլալու նոյնքան խստապահանջ՝ Ազերի ոճրագործներուն հանդէպ, որքան Ֆաշիստական պարագլուխներուն հանդէպ, եւ պիտի ուզէին որ պատասխանատուները պատժուէին, «քրէական օրէնքի ամենայն խստութեամբ», նոյնիսկ եթէ, հիմակուհիմա, իրաւաբանական թէքնիքի պատճառներով՝ ցեղասպանութիւնը չէ մտած սովետական քրէական իրաւունքի «նամանքաթուրայէն» մէջ, զանցառում մը որ, բոլոր չափանիշերով, դատապարտելի է եւ կը կարօտի անյապաղ դարմանումի: